ՈՐԱԿԻ ԵՐԱՇԽԻՔ 100%

# VIPECO
BIOTECHNOLOGY
since 2003

# ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՄԻՋԱՏԱՍՊԱՆ

## Thurin BC




**Տերևակեր միջատների և թրթուրների դեմ**

- ✓ ակտիվ է տերևակեր ու պտղակեր միջատների և թրթուրների նկատմամբ
- ✓ ակտիվանում է վնասատուների աղիքներում, խախտում մարսողական համակարգը
- ✓ չի կուտակվում բույսերի և պտուղների մեջ, չունի ֆիտոտոքսիկություն
- ✓ կիրառելի է բույսերի զարգացման ցանկացած փուլում
- ✓ անվնաս է մարդու, մեղուների, զատիկի համար

**ԹԱՐՄ, ՄԱՏՉԵԼԻ, ԱՆՎՏԱՆԳ**

## ԲԱԿՏԵՐԻԱԼ ԽՏԱՆՅՈՒԹ

Հանդիսանում է լայն սպեկտրի, ոչ ընտրողական մանրէակենսաբանական ազդեցության ինսեկտիցիդ: Մեծամասամբ համատեղելի է կենսաբանական պատրաստուկների հետ ցողարկումների

**Ծախսի նորմը՝ 2-3 լ/հա:**

*Թիրախային ազդեցություն: Երբ թրթուրն ուտում է այս պատրաստուկով մշակված տերևը, բակտերիայի արտադրած սպիտակուցը քայքայում է նրա մարսողությունը: Մի քանի ժամից վնասատուն դադարում է սնվել, բազմանալ, իսկ մի քանի օրից անկում է: Պատրաստուկը բացարձակապես անվնաս է մարդկանց, կենդանիների, թռչունների և ձկների համար: Ի տարբերություն քիմիական թունաքիմիկատների, սա չի սպանում մեղուներին, զատիկին, և այլ օգտակար միջատներին: Պատրաստի դեղամիջոց, խառնել անհրաժեշտ ջրի քանակի հետ, 20 րոպե հետո ցողարկել բույսերի վրա: Կրկնել ամեն 10-14 օրը վնասատուների յուրաքանչյուր սերնդի դեմ, սկսած ամառվա սկզբից: Մշակումները կատարել չոր եղանակին, քամու բացակայության պայմաններում, երեկոյան ժամերին: Անհրաժեշտ է լավ ցողել հատկապես տերևների տակի մասը, որտեղ սովորաբար թաքնվում և սնվում են թրթուրները:*

**Չափաբաժինը և լուծույթը՝**

*900 մլ պատրաստուկը խառնեք 200-300 լիտր ջրի հետ, ցողել բույսերին, տերևներին: 10 լիտր ջրին (մեկ սովորական սրսկիչի համար) ավելացրեք 30-35 մլ պատրաստուկ: Օգտագործելուց առաջ տափաշիշը լավ թափահարել:*

**Զգուշացում.**

*Պահել երեխաներից հեռու:*
*Օգտագործելիս կրել ձեռնոցներ և դիմակ:*
*Չխառնել խիստ ալկալային (կրային) լուծույթների հետ:*

| Խումբ | Բույսեր | Վնասատուներ | Քանակ ցողում |
|---|---|---|---|
| Բանջարեղեն | կաղամբ, լոլիկ, պղպեղ, սմբուկ, վարունգ: | կաղամբի ճերմակաթիթեռ, բվիկներ և ցեցեր | 900մլ – 200լ ջուր 1500-2000 մ² |
| Պտղատու ծառեր | խնձորենի, տանձենի, սալորենի, ծիրանենի | պտղակերներ, տերևոլորներ | 900մլ – 200լ ջուր 50 ծառ |
| Հատապտուղ | խաղող, ելակ, մոշ | խաղողի ողկուզակեր | 900մլ – 200լ ջուր 50 ծառ |
| Դեկորատ | վարդեր, այլ ծաղիկներ | տերևակեր թրթուրներ | 900մլ – 200լ ջուր 1500-2000 մ² |

*Ի տարբերություն քիմիական թույների, Bt-ն չի վնասում հողի օգտակար միկրոֆլորան և չի աղտոտում ստորգետնյա ջրերը: Բերքը կարելի է օգտագործել սրսկումից 3-5 օր անց (լվանալուց հետո): Պարունակում է Bacillus thuringiensis 3 շտամ, $2x10^9$ CFU/ml; մեծ քանակի էնդոտոկսին բյուրեղ:*

*Պահպանման պայմանները՝ Պահել չոր, մութ տեղում, +4°C-ից մինչև +20°C ջերմաստիճանում: Պիտանիության ժամկետը 6 ամիս (արտադրման օրվանից):*

Պետ. գրանցման № 1.962

Արտադրված է՝ «ՎԻՊԵԿՈ ԱՄ» ՍՊԸ
1144 ՀՀ, Արմավիրի մարզ,
ք. Վաղարշապատ, հ. Ոսկեհատ,
Բարեկամության 126,
հեռ.՝ +374(41) 455-005
info@vipeco.am

Ծավալը՝ 0,9լ

Արտադրված է՝

4850060990027

4 850060 990027 >

www.vipeco.am